ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N: 4

ՀՀՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/44 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ջրային հոսքերի կարգավորման փականի և պտտվող սկավառակով փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման (անհամապատասխանությունների շտկման) նիստի նիստի

ք. Երևան 03 օգոստոսի 2020թ.

ժամը. 14:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Կ. Գրիգորյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ) **Գ. Խոսրովյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ) **Ա. Գևորգյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ) **Ն. Համբարձումյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Կ. Բարսեղյան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Անհամապատասխանությունների շտկման մասին

(Մ. Առաքելյան)

Ընդունել ի գիտություն՝

Հրավերով սահմանված կարգով, www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցվել է «Իմպիգռա» ՓԲ ընկերությանը՝ ներկայացնելու ապրանքի ամբողջական նկարագրի ընդլայնված տարբերակը:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը:

2. Հայտերի գնահատման մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողոն ուսումնասիրեց «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում մասնակիցների փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել: Մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

«Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության և «Իմպիգռա» ՍՊ ընկերության հայտերը գնահատել բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.1. Բանակցությունների վարման մասին:

Քանի որ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով մասնակիցների առաջարկած գները գերազանցում են գնման հայտով նախատեսված նախահաշվային գները, գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցներին հրավիրել բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.2 «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

Գնման ընթացակարգի վերաբերյալ 2020 թ. հուլիսի 25-ին ստացվել է հարցադրում, որի վերաբերյալ հուլիսի 28-ին տրամադրվել է պարզաբանում, պարզաբանման մասին հայտարարությունը հրապարակվել է գնումների պաշտոնական կայքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ բանակցությունների վարման նիստ հրավիրել բանակցությունների վարման մասին ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը ժամը 12:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Առաքելյան

Անդամներ՝ _____ Կ. Գրիգորյան

_____ Գ. Խոսրովյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Կ. Բարսեղյան